



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ



Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«03» 05 2019թ

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 23

**Ձեռնարկողը՝**

**«Ավ Սթոնե» ՍՊԸ**

Արագածոտնի մարզ, գ. Կաթնաղբյուր

**Գործունեությունը՝**

Կաթնաղբյուրի փուֆերի հանքավայրի «Սիփան»  
փեղամասի հանքերևակումում 2018-2020 թթ. ընթացքում  
կապարվելիք երկրաբանական ուսումնասիրության  
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ

Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ Ձ3

« 03 » 05 2019թ.

**Արագածոտնի մարզի Կաթնաղբյուրի տուֆերի հանքավայրի «Սիփան» տեղամասի հանքերևակումում 2018-2020 թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝

«Ավ Սթոնե» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ և կից  
փաստաթղթեր /Գ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնք

Կաթնաղբյուրի հրաբխային տուֆերի հանքավայրի «Սիփան» տեղամասի հանքերևակումը վարչատնտեսական առումով գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր գյուղից 1կմ հարավ-արևմուտք, Կաթնաղբյուր համայնքի վարչական տարածքում և զբաղեցնում է մոտ 7.0 հա տարածք որից, 4.81973հա հանդիսանում է գյուղատնտեսական նշանակության վարելահող, իսկ՝ 2.18027հա՝ արոտավայր:

Նախատեսվող գործունեության նպատակն է Արագածոտնի մարզի Կաթնաղբյուրի տուֆերի հանքավայրի «Սիփան» տեղամասի հանքերևակումում կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքում տուֆերը ուսումնասիրել որպես ուղիղ կտրվածքի պատքարի արդյունահանման հումք, որոնք իրենց որակական հատկանիշներով պետք է բավարարեն «Պատքարեր լեռնային ապարներից» 4001-2013 ԳՈՍ-ի և «Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից և տրավերտիններից» 100-95 ՀՍ-ի տեխնիկական պահանջներին:

Ծրագրով նախատեսվում է 1:2000 մասշտաբի երկրաբանահանութային աշխատանքներ, հորատանցքերի մեխանիկական սյունակային հորատում, նմուշարկում և փորձնական հանույթ:

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային 132 և 112մմ տրամագծերով թագիկներով, ՈւԳԲ-1-BC տիպի հնքնագնաց հորատող հաստոցով:



Նախատեսվում է հորատել մինչև 15.0մ խորությամբ 5 հորատանցք՝ 75զծ.մ ընդհանուր ծավալով, հորատահանուկի նվազագույն ելքը՝ 80%: Հողային աշխատանքի ծավալը կլինի ընդամենը 15խմ:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը, փորձնական հանույթի բացահանքը:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալները հետևյալն են ըստ տեսակների՝ հորատահանուկի փաստագրում՝ 75զծ.մ, փորձնական բացահանքի փաստագրում՝ 20մ:

Հրաբխային տուֆերը նախատեսվում է ուսումնասիրել որպես ուղիղ կտրվածքի պատքարի հումք:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից և փորձնական բացահանքից:

Հորատահանուկի նմուշարկումը (սեկցիայի երկարությունը մինչև 5մ) իրականացվելու է կետային եղնակով: Ընդամենը հորատանցքերից կվերցվի 10 հանուկային նմուշ: Բացահանքից վերցվելու է մեկ նմուշ մենաքարի տեսքով 20x20x20սմ չափսերի: Քիմիական կազմը որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 2 նմուշ:

Նախատեսվում են նաև ռադիոմետրական չափումներ՝ օգտակար հանածոների ճառագայթափոխարկի հատկությունների ուսումնասիրման նպատակով:

Վերցված բոլոր նմուշները պետք է ենթարկվեն համապատասխան լաբորատոր ուսումնասիրությունների և փորձարկումների «Անալիտիկ» ՓԲԸ-ի լաբորատորիայում:

Օգտակար հանածոյի զանգվածից պիտանի հատքարի ելքի տոկոսի որոշման նպատակով նախատեսվում է 1 փորձնական բացահանքի անցում 10x5x5մ չափերով՝ 250մ<sup>3</sup> ծավալով, որից 100մ<sup>3</sup> դեյուլիալ առաջացումներ ու հողմահարված տուֆեր և 150մ<sup>3</sup> չհողմահարված՝ թարմ ապարներ:

Ծրագրով նախատեսված հիմնական աշխատանքներին զուգընթաց իրականացվելու է ռադիոակտիվ տարրերի ուսումնասիրություններ:

Հորատման ժամանակ կօգտագործվեն նախկինում կառուցված ճանապարհները:

Նախատեսվում է 5 հորատման հրապարակների կառուցում: Այդ աշխատանքների մակերեսը կկազմի՝ 200մ<sup>2</sup>:

Փորձնական բացահանքի վերականգնման ծավալը կկազմի 10խմ, որը կիրականացվի անմիջապես հանույթն իրականացնելուց հետո: Փորձնական բացահանքի իրականացման ընթացքում առաջանում են մակաբացման ապարներ: Ապարների ծավալը կկազմի 5\*10\*0,5=25խմ:

Նախատեսվում է կատարել հողի բերրի շերտի հանում և պահպանում հատուկ առանձնացված վայրում՝ հետագա ռեկուլտիվացիայի համար:

Աշխատանքների ավարտից հետո հողաբուսական շերտը վերականգնվելու է:

Հողաբուսաշերտի հզորությունը կազմում է 0.2մ, ուստի՝ ընդհանուր վերականգնման ծավալը կկազմի 40.0մ<sup>3</sup>: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար նախատեսված է 225.0 հազ. դրամ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն



հայտնաբերվել, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն, հատուկ պահպանվող տարածքների հետ համընկնում չկա:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները:

- Նավթամթերքների պահեստավորում և պահում ուսումնասիրության տարածքում, հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որի տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:

- Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:

- Կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր:

- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:

- Փոշենստեցման նպատակով տարածքի ջրում:

- Ուսումնասիրության տարածքում զուգարանի տեղակայում և պահպանում սանիտարական նորմերին համապատասխան:

- Հանված հողաբուսական շերտի պահեստավորում հատուկ այդ նպատակով նախատեսված վայրերում:

- Իրականացվելու է ջրցան՝ պայմանագրային հիմունքներով բերովի կցիչ ցիստեռնով, տարվա շոգ և չոր եղանակների յուրաքանչյուր օր:

- Հողի հակաէրոզիոն հատկությունների բարձրացում՝ էնդեմիկ թիթեռնաձողկավորների ու հացազգի խոտախառնուրդի ցանքի միջոցով ճիմի առաջացմամբ:

- Խախտված տարածքների լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա:

- Աշխատանքների տարածքների մեկուսացում՝ ցանկապատում՝ անվտանգության նկատառումներից ելնելով:

- Գոյություն ունեցող ճանապարհների օգտագործում:

- Բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ:

Արագածոտնի մարզի Կաթնաղբյուրի տուֆերի հանքավայրի «Սիփան» տեղամասի հանքերևակումում 2018-2020թթ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում իրականացվելու են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների իրական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, տարին երեք անգամ հաճախականությամբ՝

2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին երկու անգամ հաճախականությամբ՝

3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ դրանց պահպանման համար նախատեսված տեղից դեպի հավաքող փոսը ուղղությամբ, տարին մեկ անգամ հաճախականությամբ:

Ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գոյություն ունի ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով աշխատանքներն են նախատեսվում:



Կաթնաղբյուր համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են բնապահպանության նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում նախագիծը վերադարձվել է լրամշակման և լրակազմման, հաշվի են առնվել ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:

### Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, օդի մոնիթորինգ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Ավ-Սթոնե>> ՍՊԸ կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Կաթնաղբյուրի տուֆերի հանքավայրի «Սիփան» տեղամասի հանքերևակումում 2018-2020թթ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝



Հ. Մեսրոպյան